ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ և ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Սիլվա Ադամյան 09.08.2022 11:53:19	Առաջին հերթին պետք է նկատի ունենալ արդյոք այդ հողամասերը հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության հողեր Եթե կան այդպիսին պետ ք է դրանք շրջանցել և չվնասել գյուղացու շահերը	«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտաման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին սեփականության իրավունքով պատկանող բոլոր օբյեկտների,	

			այդ թվում գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա: Նշվածի համաձայն՝ գերակա հանրայն շահ հետապնդող նպատակով իրականացվող ծրագրերի, այդ թվում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի (այսուհետ՝ Ծրագիր)իրագործման համար կարող են հանրության գերակա շահ ճանաչվել նաև գյուղատնտեսական նշանակության հողամասեր, որոնց օտարման դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը: Հավելենք, որ Ծրագիրն իրականացվում է հիմք ընդունելով Ասիական զարգացման բանկի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի (ԱՄՔՀ 2009) պահանջները, որոնք հաստատված են ՀՀ կառավարության 16.09.	

			2010 թ. N 1274-Ն որոշմամբ : Նշված որոշմամբ գյուղատնտեսական հողամասերի փոխհատուցումից բացի լրացուցիչ փոխհատուցում է նախատեսված մշակաբույսի, ծառերի կորստի դիմաց, օժանդակություն գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստ համար:	